ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հուլիսի 2013 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՉԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԲԵՐԴ, ԱՅԳԵՀՈՎԻՏ, ԵՆՈՔԱՎԱՆ, ԲԵՐԴԱՎԱՆ, ՋՈՒՋԵՎԱՆ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄԻՐԱՂԲՅՈՒՐ, ՉՈՐԱԹԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ կետով և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2013թ. փետրվարի 21-ի <<2013 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր սահմանելու մասին>> թիվ 54-Ա որոշմամբ

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Աչաջուր համայնքում համայնքի ղեկավարի, Բերդ, Այգեհովիտ, Ենոքավան, Բերդավան, Ջուջևան, Վերին Կարմիրաղբյուր, Չորաթան համայնքներում ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2013թ. նոյեմբերի 17-ին:
2. Առաջարկել վերը նշված համայնքների ղեկավարներին.
   Օրենքով սահմանված կարգով ապահովել ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացը:
3. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին.
   Ընտրության նախապատրաստման և անցկացման ժամանակահատվածում համագործակցել թիվ 40 և 41 ընտրատարածքային ընտրական և տեղամասային ընտրական հանձնաժողովների հետ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2013թ. հուլիսի 09
ք. Իջևան